



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԾ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 6 Փետրուարին ընդունեց Լոս Անդելըսի մօտ Յայաստանի նոր գլխաւոր հիւպատոս Ն. Վ. Գրիգոր Յովհաննիսեանի այցելութիւնը: Յանդիպումին ներկայ եղան Կրօնական ժողովի ատենապետն ու փոխ ատենապետը՝ Գերաք. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան անդամ Տիար Խաչիկ Երեցեան:



Յայրենի դիւանագետը Ազգ. Առաջնորդարան ժամանեց կեօրէ առաջ ժամը 11ին, ընկերակցութեամբ Տիար Արմեն Լիլոյեանի, որ, ինչպէս ծանօթ է, աւարտած է շրջանիս մէջ գլխաւոր հիւպատոսի իր պաշտօնավարութեան շրջանը եւ շուտով պիտի վերադառնայ հայրենիք:

Փոխադարձ ծանօթացումի պահեն ետք, պաշտօնաւարտ գլխաւոր հիւպատոսը՝ Տիար Ա. Լիլոյեան ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուաւ նշանակեալ գլխաւոր հիւպատոսին ասպարեզին մասին, նշելով, որ Լոս Անդելըսի մէջ ընդհանուր հիւպատոսի կոչումը դիւանագիտական իր անդրանիկ պաշտօնն է, թեւ ան պաշտօնական ու մտաւորական բազմաթիւ առաքելութիւններ վարած է տարբեր երկիրներու մէջ:

Առաջնորդ Արքազանը ողջունեց նոր նշանակեալ գլխաւոր հիւպատոսը, խոսեցաւ Յայաստանի դիւանագիտական ներկայացուցչութեան հետ Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող Եկեղեցական, կրթական եւ այլ միաւորներու սերտ գործակցութեան մասին, որոնք կը տարուին Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուղեցոյցով ու Ս. Աթոռին հետ սերտ գործակցութեամբ: Տիար Գ. Յովհաննիսեան, իր կարգին, վեր առնուեցաւ Սփիւռքին սատար կանգնելու Յայաստանի իշխանութիւններուն պատրաստակամութիւնն ու

յայտնեց, որ իր առաքելութիւնը պիտի ըլլայ այդ տրամադրութեան մարմսաւորումը:

Առաջնորդ Սրբազնը այս առիթով անգամ մը եւս գնահատակրով արտայայտուեցաւ պաշտօնաւարտ գլխաւոր հիւպատոսին անձնական ու պաշտօնակատարի ազնիւ արժանիքներուն մասին, ու վստահութիւն յայտնեց, որ նոր գլխաւոր հիւպատոսի պաշտօնավարութեան շրջանը եւս պիտի ըլլայ գործակցութեան աւելի եւս զարգացման շրջան մը: Անոր հարցումներուն պատասխանելով, Առաջնորդ Սրբազնը ծանօթութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի ու ընդհանրապէս Թեմի անմիջական ծրագիրներուն մասին:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազնը իրենց յառաջիկայ առաքելութեանց մեջ բարի երթ մաղթեց երկու գլխաւոր հիւպատոսներուն:

## PRELATE WELCOMES NEW CONSUL GENERAL OF ARMENIA

On the morning of Friday, February 6<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the newly appointed Consul General of Armenia in Los Angeles the Honorable Grigor Hovhannisyan.



Mr. Hovhannisyan was accompanied by outgoing Consul General the Honorable Armen Liloyan who will be returning to Armenia as his term has come to an end. Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Vice-Chair Very Rev. Fr. Barthev Gulumian, and Executive Council member Mr. Khatchig Yeretzian were also in attendance.

Following the introductions, Mr. Liloyan acquainted the Prelate with Mr. Hovhannisyan's professional background and the various positions he has held in different countries.

The Prelate spoke to the new Consul General about cordial and collaborative relationship between the Consulate General and the Prelacy and familiarized him with the general mission and endeavors of the Prelacy. He once again commended the outgoing Consul General for his service, expressing confidence that the history of collaboration will continue during the new Consul General's term.

At the conclusion of their meeting the Prelate wished both Mr. Hovhannisyan and Mr. Liloyan success in their future endeavors.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԵ ԵՒ ՄԱՏԱՂՈՐԾՆԵՔ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՈՒԱՆԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ**

Հարաթ, Փետրուար 7-ը տօնն է Ս. Սարգիս Զօրավարի եւ իր որդույն՝ Մարտիրոսի:

Կիրակի, Փետրուար 8-ին, Ս. Սարգիս Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ մատաղօրինեք պիտի կատարէ Փասատիևայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ: Ս. Խորանին պիտի սպասարկեն Ազգային Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոզէ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, եւ Եկեղեցւոյ հոգեւոր հովի՛ Արք. Տ. Խորեն Զինյ. Պապոշեան:

Ինչպէս ծանօթ է, Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոս 2009 տարին հռչակած է Երիտասարդութեան տարի: Առ այդ, Առաջնորդ Սրբազն Յօր տևորինումով, մեր Թեմի բոլոր Եկեղեցիներուն մէջ, փոխան քարոզի, պիտի ընթերցուի Վեհափառ Հայրապետին պատգամը:

Հարաթ Երեկոյեան, Ս. Սարգիսի տօնին առթիւ, Երեկոյեան ժամեղգութիւն եւ հսկումի արարողութիւն պիտի կատարուի Փասատիևայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագ պիտի մատուցուի նաեւ Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» Մատրան մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր: Ս. Պատարագը պիտի մատուցէ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիներէն՝ Արք. Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան:

### **PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH ON THE NAME DAY OF THE CHURCH**

Saturday, February 7<sup>th</sup>, is the Feast of St. Sarkis, which is also the name day of St. Sarkis Church in Pasadena. On this occasion, on Sunday, February 8<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of *madagh* at St. Sarkis Church. Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Khoren Babochian will be assisting at the altar.

By the ordinance of the Prelate, on Sunday, February 8<sup>th</sup>, the Pontifical Message of H.H. Catholicos Aram I proclaiming 2009 the “Year of the Youth” will be read in Churches in lieu of a sermon.

In celebration of the Feast of St. Sarkis, on Saturday evening, services will take place at St. Sarkis Church. The first Divine Liturgy of the New Year at the Prelacy Chapel, which coincides with the Feast of St. Sarkis, will also be celebrated on this evening. The celebrant is St. Mary’s Church pastor Rev. Fr. Gomidas Torossian.

\*\*\*

## **ՆԱԽԱՏՈՆԱԿ ԵՒ ԱԽԱՆԱԿԱՆ ԽԱՐՈՅԿ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՁԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Չարբաթ, Փետրուար 14-ը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Տաճար ընծայման տօնն է, Տեառնընդառաջ:

Տօնի Նախօրեակին, Ուրբաթ, Փետրուար 13-ի Երեկոյեան, Կլենտեյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս պիտի կատարուի Տեառնընդառաջի Նախատօնակ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր:

Տարիներու աւանդութեան համաձայն, Հ.Ս.Ը.Մ.Ի սկաուտական խմբապետական կազմերը Ներկայ պիտի ըլլան արարողութեան: Ներկայ պիտի ըլլան նաեւ մեր Եկեղեցւոյ Երիտասարդական Խմբակներու անդամանդամուհիները:

Նախատօնակի արարողութեան ետք, Եկեղեցւոյ շրջափակին մէջ աւանդական խարոյկը պիտի վառուի:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազնը, Ներկայ հոգեւորականները, Ազգ. Վարչութեան, Եկեղեցւոյ ծխական մարմիններու, Հ.Ս.Ը.Մ.Ի Եւ Եկեղեցիներու Երիտասարդականի անդամները «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ պիտի համախմբուին սիրոյ սեղանի շուրջ, սեղանակից ըլլալով Առաջնորդ Սրբազնին ու ժողովականութեան Ներկայացուցիչներու:

### **CELEBRATING THE FEAST OF THE PRESENTATION OF OUR LORD TO THE TEMPLE**

Saturday, February 14<sup>th</sup>, is the Feast of the Presentation of our Lord to the Temple. Eve of the Feast services and the traditional bonfire will take place in our Churches on the evening of Friday, February 13<sup>th</sup>.

The Prelate will preside over services at St. Mary's Church in Glendale. Homenetmen scouts and members of the Prelacy Armenian Church Youth Association will participate in the services, following which they will join the Prelate, Clergy, Executive Council and parish members at a reception at the adjoining "Armenak Der Bedrossian" Hall.

\*\*\*

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

Չարբաթ 7 Փետրուարի կեսօրէ առաջ, Առաջնորդ Սրբազնան Յայրը պիտի մասնակցի Միացեալ Յայկական Յիմնադրամի Վարչութեան հերթական ժողովին, որ տեղի պիտի ունենայ Յիմնարկութեան գրասենեակին մէջ, Կլենտեյլ: Ժողովը գեկուցումներ պիտի լսէ Յիմնադրամի հայրենանուեր աշխատանքին ու ծրագիրներուն մասին:

## **PRELATE TO PARTICIPATE IN UNITED ARMENIA FUND BOARD MEETING**

On Saturday, February 7<sup>th</sup>, the Prelate will participate in the United Armenia Fund board meeting which will take place at the UAF headquarters in Glendale. Items on the agenda include a discussion on the recent activities of the UAF as well as upcoming projects and endeavors.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԵ Հ.Ս.Ը.Ս.-Ի ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԸ**

Շաբաթ 7 Փետրուարի յետմիջօրեին, Առաջնորդ Սրբազան Հայոց պիտի այցելէ Հ.Ս.Ը.Ս.-ի Ծրչանային Վարչութեան նոր կեդրոնը, ուր հանդիպում պիտի ունենայ Ծրչանային Վարչութեան ատենապետ տիար Սթիւ Վրթինեանի, անդամներու, Սկաուտական Խորհուրդի անդամներու եւ Վրեւելեան եւ Զանատայի շրջաններու Ծրչանային Վարչութեանց անդամներու հետ:

Առաջնորդ Սրբազան Հօր այցելութիւնը ծանօթացման առիթ պիտի ըլլայ նոր կեդրոնի շինարարական գործընթացին, ինչպէս նաեւ երեք շրջաններու վարչական եւ սկաուտական աշխատանքներուն:

## **PRELATE TO VISIT HOMENETMEN WESTERN REGION NEW HEADQUARTERS**

On the afternoon of Saturday, February 7<sup>th</sup>, the Prelate will visit the new headquarters of the Homenetmen Western Region where he will meet with Chairman Mr. Steve Artinian, board members, and members of the Scouting Council. Regional Executive members from the Eastern United States and Canada, who are currently in Los Angeles for a joint meeting, will also be present.

The purpose of the Prelate's visit is to become more closely familiarized with the newly renovated headquarters, as well as with the activities of the three North American regions.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ԹԵՍԻՍ ԱՉԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆԻՆ ՀԵՏ**

Ընդառաջելով Թեմիս Ազգային Վարչութեան հրաւերին, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի անդամները, գլխաւորութեամբ

Մարմինի ատենապետ Տիար Մարք Կետիկեանի, Երեքաբթի, 3 Փետրուարի Երեկոյեան Ազգային Առաջնորդարան այցելեցին եւ խորհրդակցական մտերմիկ հանդիպում մը ունեցան Թեմիս բարեխևամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան հետ: Խորհրդակցութեան հիմնական նիւթերն եին Ազգային Վարժարաններու սերնդակերտ աշխատանքը, կրօնական ու հայեցի դաստիարակութեան համար ի գործ դրուող ճիգերն ու անմիջական ու ապագայի ծրագիրներ:



Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետը՝ Դոկտ. Կարօ Յակոբեան ողջունեցին Խնամակալ Մարմինի անդամները, Նշելով, որ այս հանդիպումները առիթ են հարցերու փոխադարձ ծանօթացման ու գործակցութեան սերտացման: Քննարկուեցան Թեմիս մէջ նոր Երկորդական վարժարանի մը հաստատման վայատակով տարուող աշխատանքները, ապա նաեւ Ազգային Վարժարաններու կրթական, տնտեսական, կազմակերպական եւ սերնդակերտումի գործի դաշտերը: Խնամակալ Մարմինի անդամները ըստ բաւականին մանրամասն գեկուցումներ տուին յիշեալ կալուածներուն մէջ տարուող աշխատանքներուն ու մշակուող ծրագիրներուն մասին, որոնք եթէ անմիջականորեն կը նպատակադրեն հեզասահ ընթացքի մէջ պահել կրթական գործը, նկատի ունին նաեւ ապագայի հեռանկարները, նորահաս սերունդներուն աճող կարիքներուն հասնելու եւ կրթական համակարգը արդիականացնելու, ժամանակին հետ քայլ պահելու խնդիրները:

Մօտաւորապես մէկ ու կես ժամ տեւած հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան անդամներ գնահատանքով արտայայտուեցան Խնամակալ Մարմինին աշխատանքներուն ու ընդհանրապես Ազգ. Վարժարաններու յարկին տակ ծառայողներուն նույիրումին մասին, մասնաւորաբար վեր առնելով Խնամակալ Մարմինին արհեստավարժական մօտեցումը՝ մեր կրթական օճախներու յանձանձումին ու անոնց բարելաւման ճիգին մէջ:

Յրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը Խնամակալ Մարմինի անդամներուն յանձնեց յուշանուերներ:

## PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH BOARD OF REGENTS

Upon the invitation of the Executive Council, on the evening of Tuesday, February 3<sup>rd</sup>, members of the Board of Regents of Prelacy Schools, headed by Chair Mr. Mark Gedikian, visited the Prelacy to meet with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council members.

The Prelate and Council members welcomed the guests, noting that such meetings are valuable as they allow for the exchange of important

information and discussion on matters of mutual concern. Among the items discussed was the work undertaken for the establishment of a new high school as well as a general discussion on educational, financial, and administrative matters. The Board of Regents members spoke in detail on the work that is carried out in the aforementioned realms as well as on forthcoming projects regarding advancements in the education system to keep abreast of the changing times.

At the conclusion of the meeting the Prelate and Council members commended the members and all those serving in our schools for their devotion to the education of our youth and presented them with mementos.

\*\*\*